

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ



Լու պահելուն էրպ :

ԿՈՎՈՒՆ, ցուլին ու եզին ամէն մէկյատկութիւններն ու օգուտները տեղնիտեղը անկարելի է ստորագրել. իրենց սննդարար ու առողջարար միսն ու կաթը ամենուն յայտնի են, և բոլոր աշխարհքիս վրայ գրեթէ երկիր մը չենք գտներ որ ասոնց օգուտը վայլած չըլլայ: Ուրիշ մէկ կենդանի մը չկայ որ մարմնոյն ամէն կը տորուանքն ալ մէյմէկ օգտակար բանի գործածուին, ինչպէս կովն ու եզը. ասոնց մորթէն կը շինուի սոսինձ՝ ու կաջի. արիւնը ազնիւ կապուտներկ կ'ըլլայ, ու շաքար զտելու ալ կը գործածուի. Ճարպէն մոմ կը շինուի. նմանապէս մազերը, եղջիւրները, ոսկրներն ու փորոտիքն ալ այլեայլ բաներու կուգան:

Կովուն աղէկ տեսակը եօթը յատկութիւն պիտի ունենայ. այսինքն ան, որ բարձրահասակ ըլլայ. թէ, ճակատը լայն. դէ, նայուածքը անուշ. դէ, եղջիւրները տարածուած ու պըզտիկ. են, փորը ուռած ու լայն. դէ, ծիծերը շատ մսուտ չըլլան. էն, ծիծերուն երակները թոյլ չըլլան:

1 Բառեգուլ:

Եմէն կով նոյնչափ կաթ չտար. աղէկ կաթնտու կովերը պէտք չէ սայլ լծել կամ ուրիշ բանի գործածել, ապա թէ ոչքիչ կաթ կուտան: Ումանապէս կ'ըսեն թէ կովը պէտք չէ միակերպ չուք տեղ մը պահել, չէ նէ կաթին գոյնը գէշ կ'ըլլայ: Լանանչխոտ ուտող կովը աւելի կաթ կուտայքան թէ չոր խոտ ուտողը, միայն թէ առջինին կաթը շատ եղոտ չըլլար: Շատ կովեր երբոր ծնանելու մօտիկ կ'ըլլան՝ իրեք չորս ամիս առաջ ամենեին կաթ չեն տար, ոմանք մէկ երկու ամիս առաջ միայն չեն տար, ոմանք ալ միշտ կուտան: Կովը ծնանելէն ետքը պէտք է քիչ մը գինի խմցընել որ ուժովնայ, ու վրան բաւական ատեն անցնելէն վերջը՝ կտոր մը ջրին մէջ ալիւր ու գարի խառնելու ու ան խմցընելու է: Ումանք առանց նայելու թէ որն է օգտակարն ու վնասակարը՝ կ'ելլեն թեփ կուտան, որ աղէկ չէ. վասն զի թեփը կ'երթայ կովուն ստամոքսին վրայ կը կենայ, ու այնպիսի ատեն կենդաննոյն մեծ վնաս կուտայ: Ես հոգը պէտք է ընել ինչուան ութը կամ տասը օր, ու

գոմէն դուրս պէտք չէ հանել . նմանապէս խոտերն ալ աղէկ պէտք է ընտրել :

Հորթուկը առջի բերան ազատ պէտք է թողուլ որ արձակ համարձակ մօրը քով պտըտի , որպէս զի մայրն ալ անոր վրան լցէ մաքրէ , օդը ցուրտ եղած ատենն ալ զինքը տաքցընէ . բայց ետքէն զատ տեղ մը կը կապեն , կամ աւելի աղէկ՝ գոմի մը մէջ կը թողուն առանց կապելու , երբեմն երբեմն ալ մօրը քով կը բերեն որ կաթծծէ : Այրոր մայրը կաթ չունենայ , կամ հիւանդութենէ մը կաթը աւրուած ըլլայ , այնպիսի ատեն ուրիշ կովէ մը ծծել կուտան կաթը , կամ ջրի մէջ խառնած ալիւր կը կերցընէն , և այլն : Ի՞նոր համար մսագործները երբոր կ'ուզէն հորթուկ մը մորթել , քիչ մը ատեն նախ աս ջրախառն ալիւրը կը կերցընէն որ գիրնայ , ու ետքը կը մորթեն :

Հորթուկները երբոր իրենց մօրը հետ արածելու կ'երթան , առջի ամփուր գրեթէ ամենելին խոտ չեն ուտեր , հապա միայն կ'որոճան . վասն զի իրենց կաթի ակռաները՝ ծնանելէն մէկ քանի որ վերջը կը սկսին ծիլ , և ամիս մը պէտք է ինչուան որ կատարելագործուին . բայց վրան տարի ու կէսի չափ անցնելէն ետքը՝ ան ակռաները կը սկսին իյնալ , ու ինչուան որ ընկածներուն տեղը նոր ակռաներ բումնին՝ չորս ու կէս կամ հինգ տարի կ'ուզէ : Իսկ եղջիւրները երկրորդ տարին կը սկսին բումնիլ . քանի տարեկան ըլլան ալ աս եղջիւրներէն կ'իմացուի . վասն զի եղջիւրին ծունկին ինչուան վերի ծայրը այլեայլ յօդուած բաժնուած է , ու մէկ յօդուածէն ինչուան մէկալը տարուան մը միջոց է :

Այրոր կ'ուզէս որ հորթուկ մը աղէկ գիրնայ , նայէ որ մամնաւոր անոր համար պարարտ խոտերով դաշտ մը պատրաստես կամ գտնես . իսկ թէ որ խոտը քիչ կամ անպիտան ըլլայ , քիչ կը գիրնայ , թէպէտ և աւելի ու-

ժով ու աշխոյժ կ'ըլլայ : Ի՞այց հորթուկները երբոր կանանչեղէն շատ կ'ուտեն , կը սկսին փորհարութիւն ու փորուցաւ ունենալ , որով շատ անգամ կը մեռնին ալ : Երբեմն ներսի գործարանքնին կը գոցուի ու փորերնին կ'ուռի , անով չեն կրնար շատ մեծնալ . ասոր պատճառը կ'երեսայ թէ իրենց գոմին մէջ փակուած կենանին ու միակերպ չոր խոտ ուտելնին է . որ երբոր անկէ դուրս կ'ելլեն , առանց խտրելու կը սկսին մէկէն կանանչ խոտ ուտել , անով կը վնասուին . անոր համար մէկ քանի երկիրներ առ գիպուածին դէմը առնելու համար՝ հորթը ծնանելուն պէս կամաց կամաց կանանչ խոտ կը դնեն առջեր որ քիչ քիչ վարժի . իսկ երբոր մէկ տարեկան կ'ըլլայ , ալ վրան հոգ պէտք չէ տանիլ , ինքիրեն կրնայ մեծնալ , ու ան ատենը կ'ըսուի մոզի :

Կովերուն շատ տեղ ծառի տերեւ կը կերցընեն , ամառը կանանչները՝ ձմեռն ալ չորցածները . մանաւանդ կնձնիի² , որթի³ , ու ասոնց նման ծառերու տերեւներ որ շատ կը սկսին կովերը : Ի՞այց գոմին մէջ իրենց կերակուր տալու ատեն պիտի նայուի որ ամէն մէկ անգամուն քիչ տրուի , որպէս զի կարենան աղէկ որոճալ ու զիւրաւ մարսել . տրուած կանանչ խոտին վրան ալ ցող իջած պիտի ըլլայ , չոր խոտն ալ փոշոտ չըլլայ . վասն զի ամէն ապականած կերակուր իրենց վնասակար է : Իսկ գոմին մէջ տրուած չոր խոտին չափ մը չկրնար դրուիլ . վասն զի կենդանւոյն տարիքէն , բնութենէն , խոտին տեսակէն ու օդին եղանակէն կը կախուի . ընդհանրապէս օրուան մէջ չորս անգամ խոտ տալը բաւական է :

Ի՞րաւօտը երբոր կ'ուզէն կովերը արածելու տանիլ՝ կը նային որ ցողը ցնդելէն ետքը տանին դաշտ , ու կէս օրուան գէմ սաստիկ տաք եղած տենն ալ շուրք տեղ մը կը քաշեն : Ի՞-

բածելու ատեն երբոր կովերը լճերու կամ ջրոտ եղեգնուտներու մէջ մտնելու ըլլան՝ խոտ գտնելու համար . կը նային որ հոն զիրենք շատ չթողուն , հապա մէկէն դուրս կը քշեն . վասն զի ան աեղի օդին գէշութենէն ու տունկերուն վնասակար արտաշնութենէն կրնան կովերը վնասուիլ : Իովը որովհետեւ ոչխարին ու ձիուն պէս խոտը ակուայով չկրնար խլել , հապա լեզուով միայն կը փրցընէ , անոր համար պէտք է այնպիսի դաշտ մը արածելու տանիլոր երկայն խոտ գտնուի հոն :

Մէն կենդանի իրեն մասնաւոր յատուկ կերակուրը ունի , անով կ'ապրի ու մնունդ կ'առնէ . կովին ալ սովորական կերակուրը թէպէտ խոտ է , բայց գրեթէ ամէն կանանչեղէն , արմատեղէն , հնտեղէն ալ կ'ուտէ . ասոնց մէջ ոմանք օգտակար են , ումանք ալ վնասակար : Ի՞ոյսերուն մէջ օգտակարներն են առուսյտ , կաղամթ , եղերդ , արմատներուն մէջ շողգամ , ստեպղին , ձակնդեղ , գետնախնձոր . հունտերուն մէջն ալ բակլայ , որուն , ոսպ , լուրիա , մնրացորեն , վարսակ , գարի , նմանապէս չոր խոտ ու յարդ :

Երբոր կովու մը արմատ կ'ուզես տալ պիտի նայիս որ ջարդէս ու անանկ տաս :

Իով մը երբոր չոր խոտ ուտելու վարժեր է , զգուշացիր յանկարծակի դալար խոտ կերցնելէն . ապա թէ ոչ՝ հորթուկին պէս սաստիկ փորհարութեամթ կը տկարանայ , ու ինչուան ծանր հիւանդութիւններու կը հանդիպի :

Իովերը որովհետեւ դաշտերու մէջ արածելու ատեննին շատ խոտ կոխկըռտելով կ'ապականեն , ոմանք աս խոտերուն խնայելու համար՝ այլ և այլ հնարքներ գտած են . այսինքն գետնի վրայ ցից մը տնկած՝ չուանով մը կովը անոր կը կապեն , որպէս զի նախ ան քիչ միջոցին մէջի եղած խոտերը ուտէ՝ առանց մէկաները կոխկըռտելու . աս չուանը երբեմն կ'երկընցը

նեն ու երբեմն կը կարձեցընեն , երբեմն ալ ցիցին տեղը կը փոխեն : Ումանք ալ կովուն գլուխը չուանով մը առջեկի ոտքին մէկուն կը կապեն , կամ միայն երկու առջեկի ոտուըները կը կապեն , և կամ մէկ առջեկի ոտքը ետևի ոտքին հետ կը կապեն , որ հազիւ կը քալէ . բայց աս ամէն հնարքներն ալ կենդանեաց աղէկ չէ . վասն զի նեղը մտնելով կը վատումնան :

Իովին խմելիքը պէտք է ըլլայ զուտ մաքուր ջուր . և որովհետեւ շատ ջուր կ'ուզէ խմել , ամառը օրը երկու անգամ տաս նէ բաւական է , առաւօտ ու իրիկուն . իսկ ձմեռը մէկ անգամ , ան ալ կէս օրուան ատենը : Խմցուցած ջուրդ թէ որ ջրհորի կամ աղբիւրի ջուր է , քաշելէդ ետքը նայե որ քիչ մը ատեն թողուս որ օդին ցըրտաւթեանը հետ հաւասարի , ու ետքը խմցուր :

Իովերը երբոր տասը՝ տասուերկու կամ տասնըհինգ տարուան կը հասնին , իրենց գիրութեանը նայելով կրնաս մորթելէլ . աւելի աղէկ կ'ըլլայ թէ որ մորթելէդ քանի մը ամիս առաջ յարդով , չոր խոտով , պարտիզի արմատներով , ու հունտերով , մանաւանդ բակլայով՝ ոսպով ու գարիով գիրցնես :

Հ Յ Ե Կ

ԱՌՈՂ. ԶՈՒԹԻՒՆ

ՈՒԵՒԵԼԵՐ ՉՈՒՊՈՎ ԱՄԱՀԵԼՈՒ ՎՐԱՆԳԸ :

ՈՒԵՒԵԼԵՐ ՉՈՒՊՈՎ Թաղելուն վնասները այնպէս յայտնի են հիմակուան ատենս որ Խւրոպայի մէջ մեծ ամօթ կը սեպուի աս բանիս վրայ տարակուսիլը . անոր համար տերութիւներն ալ , ինչպէս ուրիշ անգամ ըսինք , սաստիկ օրէնքներ գրած են որ ինչ և իցէ մեռել 48 ժամկենալէն առաջ չթաղուի : Օ արմանքն ան է որ այս պիտի զգուշութիւններէն ետքն ալ